

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ
2026-2028
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ
ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

**Երևան քաղաքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի
ծրագրի եկամուտները և ծախսային քաղաքականությունը շարադրող
մասեր**

Բովանդակություն

Ներածություն-----	3
Գլուխ 1. Զարգացման հիմնական ուղղությունները -----	4
Գլուխ 2. Եկամուտներ-----	5
2.1 Երևան քաղաքի 2026-2028 թվականների կանխատեսվող եկամուտները ---	5
2.2 Եկամուտների վերծանումը ըստ առանձին տեսակների-----	6
Գլուխ 3. Ծախսեր-----	7
3.1 Երևան քաղաքի 2026-2028 թվականների կանխատեսվող ծախսերը-----	7
3.2 Բյուջեային ծախսերի տնտեսագիտական և գործառական դասակարգումները-----	9
3.3 Բյուջեային ծրագրերը և միջոցառումները-----	12
Գլուխ 4. Երևան քաղաքի 2026-2028 թվականների կանխատեսվող դեֆիցիտը-----	19

Ներածություն

Երևան քաղաքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (այսուհետ՝ ՄԺԾԾ) հանդիսանում է Երևան քաղաքի զարգացման հեռանկարի թվային արտացոլումը և համայնքի միջնաժամկետ կտրվածքով գլխավոր ֆինանսական փաստաթուղթը, որը, և հանդիսանում էլակետ՝ նախագծելու համապատասխան տարվան հաջորդող տարեկան բյուջեն:

ՄԺԾԾ-ով ներկայացվում է կանխատեսվող Երևան քաղաքի հաջորդող 3 տարիների եկամուտները, դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները, ծախսային ուղղություններն ըստ ոլորտների, որոնք բերելու են Երևան քաղաքի կայուն և համաչափ զարգացմանը, ինչպես նաև կընձեռնեն համայնքին առավել արդյունավետ գեներացնել եկամուտները, մասնավորապես միջնաժամկետ կտրվածքով կմշակվեն մեխանիզմներ դրանք ավելացնելու ուղղությամբ, որը իր հերթին կբերի համայնքի զարգացմանը միտված ծախսերի ավելացմանը:

ՄԺԾԾ-ն կնպաստի ավելի լայն և հեռանկարային ծախսերի քաղաքականության մշակմանը, որի շնորհիվ համայնքի զարգացման հեռանկարը կստանա բյուջետային ձևաչափ, որն ըստ էության հասանելի կդարձնի բոլորին, այդ թվում քաղաքացիներին՝ ուսումնասիրելու միջնաժամկետ կտրվածքով համայնքի կողմից նախատեսվող ծախսերի բաշխումն ըստ ոլորտների՝ թվային տեսքով, ընդ որում, սույն ֆինանսական փաստաթղթով առավել կընդգծվի բյուջետային ծրագրերի շարունակականության ապահովման ֆինանսական մեխանիզմները:

Երևան քաղաքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը նախագծվել է ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքներով:

ԳԼՈՒԽ 1. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Երևան քաղաքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով կանխատեսվող հատկացումներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն բխում են Երևան քաղաքի զարգացման հնգամյա ծրագրից, և ըստ էության ծախսերը նախատեսվել են հետևյալ գերակա ուղղություններով.

1) Երևանը՝ կյանքի համար հարմարավետ քաղաք

- ա. Բարեկարգ և հարմարավետ ենթակառուցվածքներով քաղաք
- բ. ՏՏ լուծումներով հագեցած քաղաք
- գ. Կանաչ լուսավորություն ունեցող քաղաք
- դ. Սոցիալապես պաշտպանված քաղաք
- ե. Արդյունավետ կոմունալ ծառայություններ ապահովող քաղաք

2) Երևանը՝ մարդկային ներուժի զարգացման և հնարավորությունների իրագործման քաղաք

- ա. Հասանելի կրթության քաղաք
- բ. Մշակութային քաղաք
- գ. Հասանելի առողջապահության քաղաք
- դ. Սպորտի մասայականացման և երիտասարդության քաղաք
- ե. Մարդակենտրոն քաղաք

3) Երևանը՝ կայուն զարգացման քաղաք

- ա. Կանաչ և կայուն շրջակա միջավայր ունեցող քաղաք
- բ. Հասանելի հանրային տրանսպորտային համակարգով քաղաք
- գ. Էներգախնայող և էներգաարդյունավետ քաղաք
- դ. Միջազգային համագործակցության քաղաք

4) Երևանը՝ տնտեսական զարգացման քաղաք

- ա. Զարգացման պոտենցիալ ունեցող քաղաք
- բ. Զարգացած առևտրի և ծառայությունների քաղաք
- գ. Զբոսաշրջության քաղաք

ԳԼՈՒԽ 2. ԵԿԱՄՈՒՏՆԵՐ


2.1. Երևան քաղաքի 2026-2028 թվականների կանխատեսվող եկամուտները


1. Երևան քաղաքի 2026-2028 թվականների եկամուտները կանխատեսվել են համապատասխանաբար՝ 150,277,622.9, 152,653,478.2 և 148,513,817.5 հազ. դրամ: Ընդամենը եկամուտների կազմում նվազումը պայմանավորված է պետական հատկացումների որոշակի նվազման հետ, այդ թվում՝ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների նվազման հետ:

2. Սեփական եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 233-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված դրույթների կիրառմամբ, որի արդյունքում միջնաժամկետ կտրվածքով ավելացման գերակշիռ մասը նախատեսվում է անշարժ գույքի մասով հարկային եկամտատեսակից:

Գծապատկեր 1

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ





2.2. Եկամուտների վերծանումն ըստ առանձին տեսակների

1. Երևան քաղաքի 2026-2028 թվականների եկամուտների կազմում՝ սեփական եկամուտների ցուցանիշը համապատասխանաբար կազմում է 91,817,898.5, 93,213,668.5 և 93,422,426.3 հազ. դրամ, և սույն դինամիկան դիտարկելիս հարկ է արձանագրել, որ աճը կանխատեսվում է 5 տարվա կտրվածքով, հաշվի առնելով նաև 2024 թվականը՝ 71,199,638.9 հազ. դրամ և 2025 թվականը՝ 90,234,059.9 հազ. դրամ:

2. 2026-2028 թվականների ՄԺԾԾ-ով սեփական եկամուտների կազմում էական եկամտատեսակներն են՝

1) Գույքահարկ անշարժ գույքի մասով համապատասխանաբար՝ 23,500,000.0, 23,470.000, 23,442,500.0 հազ. դրամ,


2) Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող

գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարներ՝ 21,303,814.7, 22,582,043.6 և 22,782,043.6 հազ. դրամ,

3) Աղբահանության վճարներ՝ 5,000,000.0, 5,000,000.0, 5,000,000.0 հազ. դրամ

3. Պետության կողմից տրամադրվող հատկացվող շնորհները՝ այդ թվում ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիան կանխատեսվում է միջնաժամկետ հատվածում յուրաքանչյուր տարի 8,249,551.5 հազ. դրամ, սուբվենցիան կանխատեսվում է համապատասխանաբար՝ 1,508,481.5, 829,462.5, 826,462.5 հազ. դրամ, իսկ պետության կողմից Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների կատարման համար տրվող հատկացումը կանխատեսվում է համապատասխանաբար՝ 49,151,691.4, 50,360,795.7 և 46,015,377.2 հազ. դրամ:

Գծապատկեր 3




ԳԼՈՒԽ 3. ԾԱԽՍԵՐ

3.1. Երևան քաղաքի 2026-2028 թվականների կանխատեսվող ծախսերը

1. Երևան քաղաքի 2026-2028 թվականների ծախսերը կանխատեսվում են համապատասխանաբար՝ 157,929,850.7, 158,956,112.8 և 153,182,617.1 հազ. դրամ և

միտված են համայնքի համաչափ և կայուն զարգացմանը: Ընդհանուր հատկացումների կազմում կապիտալ զուտ ծախսերը կազմում են համապատասխանաբար՝ 26,593,435.1, 24,781,572.5 և 20,898,273.7 հազ. դրամ: Պաշտոնական դրամաշնորհների և պատվիրակված լիազորությունների համատեքստում հատկացումները կազմում են համապատասխանաբար՝ 58,459.724.4, 59,439,809.7, 55,091,391.2 հազ.դրամ, իսկ պահուստային ֆոնդը համապատասխանաբար՝ 150,000.0, 150,000.0 150,000.0 հազ. դրամ: Ծախսերի քաղաքականության և նպատակներին հասնելու կարևորագույն գործոն է հանդիսանում Երևանի քաղաքապետարանի պահպանման ծախսերի համատեքստում ստանալ այնպիսի մարդկային ռեսուրս, որը ի վիճակի կլինի համապատասխան ծառայությունները մատուցել քաղաքին՝ լուծելով համայնքի առջև դրված կայուն զարգացման պահանջը՝ մշակելով և կատարելով դրա իրագործմանն ուղղված բյուջետային ծրագրերը:

Գծապատկեր 4



2. Միջնաժամկետ ծրագրի ծախսային մասը նախագծվել է հետևելով բյուջետային հաշվեկշռվածության սկզբունքին՝ ապահովելով բյուջեների կառուցման ստանդարտները և ներկայացնելով այն ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգումների, ինչպես նաև ըստ առանձին ծրագրերի:

3. Երևան քաղաքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով սկիզբ դրվեց Երևան քաղաքի ֆինանսական համակարգի բարեփոխումների գործընթացին, մասնավորապես, հաշվի առնելով բյուջետավորման արդի պահանջները՝ Երևանի քաղաքապետարանը նախաձեռնեց և առաջին անգամ անցում կատարեց

ծախսային բյուջետավորումից դեպի ծրագրային մեթոդաբանությամբ բյուջետավորման: Նման մեթոդաբանությամբ բյուջետավորվել է նաև Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեն: Հարկ է նշել, որ Երևան համայնքում ծրագրային բյուջետավորման ներդրման համար սկզբնաղբյուր է հանդիսացել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի բյուջետավորման ընթացակարգերը, ծրագրերի և միջոցառումների դասակարգումները, հավելվածային ձևաչափերը, ինչպես նաև ոլորտին վերաբերվող տարբեր մեթոդաբանություններ, որից հետո արդեն, հաշվի առնելով համայնքային առանձնահատկությունները՝ այն ներդրվել է Երևանի քաղաքապետարանի բյուջետավորման ընթացակարգերում:

4. Սույն նախագծին կից փաստաթղթի տեսքով (*Աղյուսակ N1, Աղյուսակ N2*) ներկայացվում է նաև 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ հիմնված ծրագրային բյուջետավորման ձևաչափի և չափանիշների վրա, որոնք համապարփակ տեղեկատվություն են տրամադրում ֆինանսական ռեսուրսների ուղղորդման նպատակների և արդյունքների վերաբերյալ: Բյուջեի կազմումը նման եղանակով համահունչ է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքով սահմանված բյուջետային համակարգի սկզբունքներին: Ընդ որում կից փաստաթղթում ծախսային ծրագրերը նաև կապվում են համայնքի հնգամյա զարգացման ծրագրով ներկայացված առաջնահերթությունների հետ (աղյուսակ 2, գծապատկեր 6):

5. Սրանով սկիզբ է դրվում Երևան համայնքի և հետագայում արդեն բոլոր Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջետային համակարգի արդիականացմանը, մասնավորապես արձանագրելով տարեկան բյուջեի ծրագրային բյուջետավորման մեթոդաբանությամբ նախագծելու հենքը:

6. Միաժամանակ հարկ է նշել, որ ներկայացված երկու տարբեր մեթոդաբանության բյուջետային ձևաչափերում՝ ծախսային և ծրագրային, համայնքային բյուջեի պարտադիր մաս կազմող՝ գործառական և տնտեսագիտական դասակարգումները, արտացոլված են միանման ձևաչափով և հավասար թվային տվյալներով:

3.2. Բյուջետային ծախսերի տնտեսագիտական և գործառական դասակարգումները

1. Ընդհանուր ծախսերը ըստ բյուջետային տնտեսագիտական դասակարգման բնույթների ունեն հետևյալ տեսքը.

- 1) Աշխատանքի վարձատրություն՝ 13,366,730.1, 13,366,730.1, 13,366,730.1 հազ. դրամ,
- 2) Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում՝ 14,655,491.8, 15,003,596.4, 15,950,152.6 հազ. դրամ,
- 3) Տոկոսավճարներ՝ 64,237.1, 63,860.3, 62,726.1 հազ. դրամ,
- 4) Սուբսիդիաներ՝ 80,442,039.4, 80,498,157.9, 82,179,302.7 հազ. դրամ,
- 5) Դրամաշնորհներ՝ 489,488.3, 489,488.3, 489,488.3 հազ. դրամ,
- 6) Նպաստներ՝ 3,824,064.0, 3,355,684.2, 3,387,675.1 հազ. դրամ,
- 7) Այլ ծախսեր՝ 25,646,364.9, 27,070,794.6, 22,703,497.6 հազ. դրամ,
- 8) Հիմնական միջոցներ՝ 27,243,435.1, 26,709,801.0, 22,245,044.6 հազ. դրամ,
- 9) Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր՝ (7,802,000.0), (7,602,000.0), (7,202,000.0) հազ. դրամ:

2. Կանխատեսվող բյուջետային ծախսերի բաշխման ոլորտային սկզբունքը կայանում է Երևան քաղաքի համաչափ զարգացման և ոլորտային ուսումնասիրությունների արդյունքում հանգած խնդիրների լուծման տեսլականներով, և այն ըստ էության բյուջետային գործառական դասակարգումը արտացելում է հենց այդ ոլորտները, մասնավորապես դրանք ըստ բաժինների բաշխված են հետևյալ կերպ.


- 1) Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ համապատասխանաբար՝ 13,099,842.0, 13,198,744.6 և 13,129,822.5 հազ. դրամ,
- 2) Պաշտպանություն՝ 164,528.4, 152,371.1 և 174,051.9 հազ. դրամ,
- 3) Տնտեսական հարաբերություններ՝ 60,795,781.5, 63,749,534.0, 57,264,534.9 հազ. դրամ,
- 4) Շրջակա միջավայրի պաշտպանություն՝ 11,707,329.3, 11,904,854.0 և 11,899,854.0 հազ. դրամ,
- 5) Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն՝ 8,123,603.1, 8,013,960.7 և 7,853,957.6 հազ. դրամ,
- 6) Առողջապահություն՝ 410,000.0, 530,000.0 և 650,000.0 հազ. դրամ,
- 7) Հանգիստ, մշակույթ և կրոն՝ 8,321,141.6, 7,605,751.8 և 7,370,515.0 հազ. դրամ,
- 8) Կրթություն՝ 52,923,740.3, 51,406,174.8, 52,422,881.3 հազ. դրամ,

9) Սոցիալական պաշտպանություն՝ 2,233,884.5, 2,244,725.4 և 2,266,999.9 հազ. դրամ,

10) Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր՝ 150,000.0, 150,000.0 և 150,000.0, հազ. դրամ:

Գծապատկեր 5

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ
ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ՏՈԿՈՍԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ**



Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ

Պաշտպանություն

Տնտեսական հարաբերություններ

Շրջակա միջավայրի պաշտպանություն

Բնակարանային շինարարություն

Առողջապահություն

Հանգիստ, մշակույթ և կրոն

Կրթություն

Սոցիալական պաշտպանություն

Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր

3. Պահուստային ֆոնդը միջնաժամկետ ժամանակահատվածում նախատեսվել է համապատասխանաբար 11,745,998.3, 12,990,166.4 և 10,559,245.0 հազ. դրամը, որից 11,595,998.3, 12,840,166.4 և 10,409,245.0 հազ. դրամը կանխատեսվում է պահուստային ֆոնդի վարչական մասից հատկացնել բյուջեի ֆոնդային մաս՝ կապիտալ ծախսերի ֆինանսավորմանը:

3.3. Բյուջետային ծրագրերը և միջոցառումները

Հ/հ	Ծրագրի դասիչը	Ծրագրի անվանումը	Ծրագրի գումարը միջնաժամկետ կտրվածքով		
			2026թ.	2027թ.	2028թ.
1	5001	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի լիազորությունների իրականացման ապահովում	12,219,774.0	12,232,683.4	12,234,824.3
2	5002	Համագործակցության ապահովում միջազգային կազմակերպությունների հետ	34,700.0	34,700.0	34,700.0
3	5003	Քաղաքացիական կացության ակտերի գրանցում	33,983.0	33,983.0	33,983.0
4	5004	Հետազոտման և նախագծման աշխատանքների իրականացում	591,272.0	672,007.0	596,888.0
5	5005	Դատական գործեր	191,718.0	196,828.9	200,844.9
6	5006	Քաղաքացիական պաշտպանությանն աջակցություն	131,656.9	140,290.5	164,943.3
7	5007	Համայնքային աջակցություն զորահավաքային հարցերին	28,881.5	8,900.6	8,928.6
8	5008	Այլընտրանքային աշխատանքային ծառայություն	3,990.0	3,180.0	180.0

9	5009	Առևտրի կանոնակարգում	30,000.0	30,000.0	30,000.0
10	5010	Հանրային շենքերի էներգաարդյունավետության բարձրացում	8,800,221.1	5,870,746.0	2,670,796.6
11	5011	Ոռոգման համակարգի վերականգնում և արդիականացում	30,000.0	33,000.0	32,500.0
12	5012	Ճանապարհային ենթակառուցվածքների արդիականացում և բարելավում	16,440,276.1	12,516,281.4	14,501,845.5
13	5013	Ճանապարհային երթևեկության կազմակերպում	1,688,884.9	1,686,484.9	1,497,594.9
14	5014	Հեղիոտների հարմարավետության ապահովում	1,280,622.0	1,342,853.2	1,095,235.0
15	5015	Տրանսպորտային համակարգի արդիականացում	4,471,256.5	4,078,444.0	842,444.0
16	5016	Հանրային երթուղային տրանսպորտ	20,473,076.3	20,473,076.3	20,473,076.3
17	5017	Երևանի մեթրոպոլիտենի շահագործում և ենթակառուցվածքների զարգացում	9,476,936.0	19,376,936.0	17,376,936.0
18	5018	Վերելակային տնտեսության արդիականացում	3,027,700.0	3,031,650.0	3,032,165.0
19	5019	Զբոսաշրջության զարգացում	148,540.5	148,540.5	148,540.5
20	5020	Արտաքին ձևավորում	802,392.0	804,292.0	804,792.0
21	5021	Էնթակառուցվածքների թվայնացման ապահովում	720,189.4	720,189.4	720,189.4

22	5022	Ներդրումային ծրագրերի մշակում	342,383.0	342,383.0	342,383.0
23	5023	Համայնքային գույքի կառավարում	(7,772,805.0)	(7,572,657.7)	(7,172,617.7)
24	5024	Բնակչության հատուկ սպասարկում	57,460.9	57,460.9	57,460.9
25	5025	Անկանխադասելի իրավիճակներում ընթացիկ խնդիրների լուծմանն ուղղված գործողություններ	545,900.0	577,250.0	578,633.0
26	5026	Աղբահանություն և սանիտարական մաքրում	6,651,982.9	6,992,664.0	6,987,664.0
27	5027	Կոշտ թափոնների կառավարում	28,800.0	28,800.0	28,800.0
28	5029	Օդի աղտոտման նվազեցում	12,000.0	13,000.0	13,000.0
29	5030	Կանաչ ֆոնդի արդիականացում և պահպանում	4,735,609.2	4,591,452.8	4,591,452.8
30	5031	Կենդանիների խնամքի ապահովում	278,937.2	278,937.2	278,937.2
31	5032	Արտաքին լուսավորության ցանցի պահպանում և ընդլայնում	2,453,649.0	2,474,983.0	2,475,483.0
32	5033	Երևանի քաղաքային լուսավորություն	97,603.2	0.0	0.0
33	5034	Բազմաբնակարան շենքերի և բակային տարածքների բարեկարգում	5,572,350.9	5,538,977.7	5,378,474.6
34	5035	Որակյալ բժշկական ծառայությունների մատուցում	410,000.0	530,000.0	650,000.0
35	5036	Սպորտի զարգացման խթանում	408,454.6	461,638.0	517,028.6

36	5037	Հանգստի գուրիների բարեկարգում և նորերի ստեղծում	1,740,385.9	790,832.0	241,637.0
37	5038	Գրադարանային ոլորտի զարգացում	956,226.0	956,226.0	1,086,059.8
38	5039	Մշակութային ժառանգության պահպանություն	358,207.7	359,707.7	410,288.9
39	5040	Մշակութային կյանքի զարգացում	4,207,962.6	4,235,138.3	4,456,671.9
40	5041	Կենդանիների պահպանություն և ցուցադրություն	643,904.8	793,209.8	647,828.8
41	5042	Երիտասարդական ոլորտի զարգացում	6,000.0	9,000.0	11,000.0
42	5043	Նախադպրոցական կրթության ապահովում	18,147,086.4	20,004,395.5	20,402,820.6
43	5044	Հանրակրթության ապահովում	23,150,066.9	23,184,616.4	23,185,066.7
44	5045	Արտադպրոցական ուսուցման ապահովում	11,626,587.0	8,217,162.9	8,834,994.0
45	5046	Հուղարկավորությունների կազմակերպման աջակցություն	26,888.6	26,888.6	26,888.6
46	5047	Երեխաների իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում	1,500.0	2,150.0	2,800.0

47	5048	Մշակութային և կրթական միջոցառումներ՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների համար	62,389.3	72,828.9	82,163.4
48	5049	Երևան քաղաքի վարչական շրջաններում երեխային լսելու սենյակների հիմնում	20,000.0	0.0	0.0
49	5050	Երևան համայնքում խնամատարության ինստիտուտի շարունակական զարգացում	1,750.0	1,500.0	0.0
50	5051	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքներին ուղղված սոցիալական աջակցություն	254,274.6	262,593.9	271,883.9
50	5052	Երևան համայնքում սոցիալական խմբերի համար ծառայությունների կազմակերպում	47,880.0	53,880.0	55,880.0
52	5053	Երևան քաղաքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներ	50,000.0	50,000.0	50,000.0
53	5054	Արտակարգ իրավիճակների և նմանատիպ այլ դեպքերում սոցիալական աջակցություն	40,000.0	40,000.0	40,000.0
54	5055	Զբաղվածության խթանում	15,000.0	17,750.0	17,750.0

55	5056	Սոցիալական հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպություններին աջակցություն	80,480.0	80,480.0	80,480.0
56	5057	Երևան քաղաքում համայնքային սոցիալական ծառայությունների մատուցման նոր համակարգ	100,000.0	100,000.0	100,000.0
57	5058	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի և ենթակա կազմակերպությունների աշխատակիցներին սոցիալական փաթեթով ապահովում	1,528,722.0	1,529,154.0	1,529,154.0
58	5059	Համայնքային պահուստային ֆոնդ	150,000.0	150,000.0	150,000.0
59	5060	Համայնքի կողմից տրամադրվող աջակցություն տարբեր ուլորտային կազմակերպություններին	261,142.8	261,142.8	261,142.8
60	5061	Երեխաների և սոցիալական պաշտպանության համակարգի շարունակական զարգացում	5,000.0	7,500.0	10,000.0

1. Նշված ծրագրերի կազմում առկա է 148 միջոցառում, որոնք դասակարգվել են 5 տեսակների, մասնավորապես՝

- 1) Ծառայությունների մատուցում
- 2) Համայնքի կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ
- 3) Հանրության կողմից անմիջականորեն օգտագործվող ակտիվների հետ կապված միջոցառումներ
- 4) Ֆինանսավորման ծախսերի իրականացում
- 5) Տրանսֆերտների տրամադրում:

ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՊԸ ՔԱՂԱՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Գծապատկեր 6

Բարեկարգ և
հարմարավետ
ենթակառուցվածքներով
քաղաք



ՏՏ լուծումներով
հագեցված քաղաք



Կանաչ լուսավորություն
ունեցող քաղաք



Սոցիալապես
պաշտպանված քաղաք



Արդյունավետ կոմունալ
ծառայություններ
ապահովող քաղաք



Կրթված քաղաք



Մշակութային քաղաք



Հասանելի
առողջապահություն



Սպորտի և
երիտասարդության
քաղաք



Կանաչ և կայուն շրջակա
միջավայր ունեցող
քաղաք



Հասանելի
տրանսպորտային
համակարգով քաղաք



Էներգախնայող և
էներգաարդյունավետ
քաղաք



Միջազգային
համագործակցության
քաղաք



Զարգացած առևտրի և
ծառայությունների
քաղաք



Զբոսաշրջության քաղաք

ԳԼՈՒԽ 4. ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԴԵՖԻՑԻՏԸ

1. 2026-2028 թվականների կանխատեսվող դեֆիցիտի կամ հավելուրդի ֆինանսավորման աղբյուրների կազմում արտացոլված են՝ ներգրավված վարկային միջոցները, տարեսկզբի ազատ մնացորդի վարչական մասից ֆոնդային մաս անցնող և հենց ֆոնդային մասում կանխատեսվող բյուջետային միջոցները, ինչպես նաև ներգրավված վարկային միջոցների մայր գումարի մարմանն ուղղվող բյուջետային ելքերը, որի ընդհանուր պատկերով 2026-2028 թվականների կանխատեսվող դեֆիցիտը կազմում է 7,652,227.8, 6,302,635.0, 4,668,799.8 հազ. դրամ:

Երևան քաղաքի 2026-2028թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրի բյուջետային միջոցառումները՝ ըստ ծրագրային, գործառական և տնտեսագիտական դասակարգման

հազ.դրամ

Գործառական դասիչը			Ծրագրային դասիչը		Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները, բյուջետային ծրագրերի անվանումները, նպատակը, վերջնական արդյունքը, միջոցառումների անվանումները և նկարագրությունը	Հոդվածի №	2026թ.	2027թ.	2028թ.
Բաժինը	Խումբը	Դասը	Ծրագիր	Միջոցառում					
					ԸՆԴԱՄԵՆԸ		157,929,850.7	158,956,112.8	153,182,617.1
01					ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ		13,099,842.0	13,198,744.6	13,129,822.5
					այդ թվում՝				
	01				Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ		12,254,474.0	12,267,383.4	12,269,524.3
					այդ թվում՝				
		01			Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում		12,219,774.0	12,232,683.4	12,234,824.3
					այդ թվում՝				
					Ծրագրի անվանումը՝				
			5001		Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի լիազորությունների իրականացման ապահովում		12,219,774.0	12,232,683.4	12,234,824.3
					Ծրագրի նպատակը՝				
					Երևանի քաղաքապետարանի աշխատակազմին վերապահված գործառնությունների արդյունավետ և թափանցիկ իրականացում				
					Վերջնական արդյունքի նկարագրություն՝				
					Որակյալ համայնքային ծառայությունների մատուցում բնակչությանը				
					Միջոցառման անվանումը՝				
				50001	Աշխատակազմի գործունեության իրականացման համար անհրաժեշտ համակարգերի պահպանում		12,047,013.6	12,068,257.8	12,069,629.7
					Միջոցառման նկարագրությունը՝				
					Աշխատակազմի պահպանման համար անհրաժեշտ ծախսերի իրականացում				
					այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
					- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	8,984,899.9	8,984,899.9	8,984,899.9
					- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	4112	718,792.0	718,792.0	718,792.0
					- Էներգետիկ ծառայություններ	4212	249,472.1	255,710.2	256,214.9
					- Կոմունալ ծառայություններ	4213	22,478.6	23,215.6	23,319.7
					- Կապի ծառայություններ	4214	345,588.6	346,337.5	346,703.3
					- Ապահովագրական ծախսեր	4215	19,569.7	19,916.5	19,957.4
					- Գույքի և սարքավորումների վարձակալություն	4216	74,520.0	74,520.0	73,320.0
					- Ներքին գործուղումներ	4221	7,100.0	8,100.0	8,100.0
					- Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	4222	59,500.0	59,900.0	60,000.0
					- Վարչական ծառայություններ	4231	16,850.0	17,850.0	17,850.0
					- Համակարգչային ծառայություններ	4232	117,379.6	120,379.6	120,379.6
					- Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ	4233	26,000.0	26,000.0	26,000.0

				- Տեղեկատվական ծառայություններ	4234	31,329.0	26,765.5	26,757.5
				-Կառավարչական ծառայություններ	4235	116,000.0	116,000.0	116,000.0
				- Ներկայացուցչական ծախսեր	4237	71,590.0	71,794.5	71,874.6
				- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	60,428.8	65,456.1	65,496.1
				- Մասնագիտական ծառայություններ	4241	17,695.2	18,526.8	17,373.1
				- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	37,800.0	38,190.0	38,622.3
				- Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4252	144,513.5	145,378.3	145,650.7
				- Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	75,440.7	76,828.2	77,317.4
				- Տրանսպորտային նյութեր	4264	226,618.8	228,457.0	229,000.0
				- Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	49,483.1	50,062.0	50,699.4
				- Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	16,920.0	17,290.0	17,290.0
				- Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	367,282.0	367,282.0	367,282.0
				- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին	4638	42,600.0	42,600.0	42,600.0
				- Այլ նպաստներ բյուջեից	4729	58,500.0	58,500.0	58,500.0
				- Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	4819	11,000.0	11,000.0	11,000.0
				- Պարտադիր վճարներ	4823	16,572.0	16,861.6	16,905.2
				- Այլ ծախսեր	4861	61,090.0	61,644.5	61,724.6
				Միջոցառման անվանումը՝				
			70001	Ծրագրային ապահովման և աշխատանքային միջավայրի փեխնիկական հագեցվածության բարելավում		142,190.4	139,365.6	140,194.5
				Միջոցառման նկարագրությունը՝				
				Աշխատանքային պայմանների բարելավման համար օժանդակ մեքենա-սարքավորումների, գույքի և ծրագրային ապահովման ձեռքբերում				
				այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
				- Վարչական սարքավորումներ	5122	129,610.4	126,778.3	127,567.2
				- Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	12,580.0	12,587.3	12,627.3
				Միջոցառման անվանումը՝				
			70002	Աշխատանքային գործունեության համար պատշաճ շենքային պայմանների ապահովում		30,570.0	25,060.0	25,000.1
				Միջոցառման նկարագրությունը՝				
				Վարչական օբյեկտների կառուցման և հիմնանորոգման աշխատանքների իրականացում				
				այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	30,570.0	25,060.0	25,000.1
		03		Արտաքին հարաբերություններ		34,700.0	34,700.0	34,700.0
				այդ թվում՝				
				Ծրագրի անվանումը՝				
			5002	Համագործակցության ապահովում միջազգային կազմակերպությունների հետ		34,700.0	34,700.0	34,700.0
				Ծրագրի նպատակը՝				
				Միջազգային կազմակերպությունների հետ գործընկերային հարաբերությունների ընդլայնում				
				Վերջնական արդյունքի նկարագրություն՝				
				Երևան քաղաքի հանրաճանաչելիության բարձրացում, միջազգային ակտիվության ամրապնդում				
				Միջոցառման անվանումը՝				
			50002	Երևան քաղաքին միջազգային վարկանիշի պրամադորում		14,000.0	14,000.0	14,000.0
				Միջոցառման նկարագրությունը՝				

					Երևան քաղաքի հանրային ֆինանսների բնագավառում միջազգային վարկանիշ շնորհելու գործընթացի իրականացում				
					այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
					- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	14,000.0	14,000.0	14,000.0
					Միջոցառման անվանումը՝				
				50003	Միջազգային կազմակերպությունների անդամակցության վճարներ		20,700.0	20,700.0	20,700.0
					Միջոցառման նկարագրությունը՝				
					Համատեղ ծրագրերի իրականացման նպատակով անդամակցություն վճարների տրամադրում միջազգային կազմակերպություններին				
					այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
					- Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	4819	20,700.0	20,700.0	20,700.0
03					Ընդհանուր բնույթի ծառայություններ		33,983.0	33,983.0	33,983.0
					այդ թվում՝				
	01				Աշխատակազմի (կադրերի գծով) ընդհանուր բնույթի ծառայություններ		33,983.0	33,983.0	33,983.0
					այդ թվում՝				
					Ծրագրի անվանումը՝				
		5003			Քաղաքացիական կացության ակտերի գրանցում		33,983.0	33,983.0	33,983.0
					Ծրագրի նպատակը՝				
					Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայությունների մատուցում				
					Վերջնական արդյունքի նկարագրությունը՝				
					Քաղաքացիական կացության ակտերի գրանցման համակարգի զարգացում, գործընթացի արդյունավետության բարելավում				
					Միջոցառման անվանումը՝				
				50004	Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպում (պարզաբանական լիազորություններ)		33,983.0	33,983.0	33,983.0
					Միջոցառման նկարագրությունը՝				
					Քաղաքացիական կացության ակտերի գրանցման, տեղեկանքների տրամադրման, ակտային գրանցումների վերականգնման, ակտային գրանցումներում ուղղումների, փոփոխությունների կատարում				
					այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
					- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	29,238.3	29238.3	29238.3
					- Էներգետիկ ծառայություններ	4212	3,505.3	3505.3	3505.3
					- Կոմունալ ծառայություններ	4213	214.4	214.4	214.4
					- Կապի ծառայություններ	4214	500.0	500	500
					- Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	350.0	350	350
					- Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	150.0	150	150
					- Պարտադիր վճարներ	4823	25.0	25	25
05					Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ		591,272.0	672,007.0	596,888.0
					այդ թվում՝				
		01			Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ		591,272.0	672,007.0	596,888.0
					այդ թվում՝				

					Ծրագրի անվանումը՝				
			5004		Հետազոտման և նախագծման աշխատանքների իրականացում		591,272.0	672,007.0	596,888.0
					Ծրագրի նպատակը՝				
					Երևան քաղաքի զարգացմանն ուղղված տարբեր ոլորտներում իրականացնելիք գործողությունների պլանավորման ուսումնասիրություններ				
					Վերջնական արդյունքի նկարագրություն՝				
					Հետազոտման և պլանավորման հենքի ապահովում				
					Միջոցառման անվանումը՝				
			70003		Նախագծային աշխատանքներ		276,272.0	356,307.0	281,188.0
					Միջոցառման նկարագրությունը՝				
					Փորձաքննությունների, նախագծման ախահաշվային փաստաթղթերի մշակման, կազմման և այլ նախագծահետազոտական աշխատանքների ձեռքբերում				
					այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
					- Նախագծահետազոտական ծախսեր	5134	276,272.0	356,307.0	281,188.0
					Միջոցառման անվանումը՝				
			70004		Երևան քաղաքի գլխավոր հատակագծի իրականացման վերլուծություն		250,000.0	250,000.0	250,000.0
					Միջոցառման նկարագրությունը՝				
					Երևան քաղաքի գլխավոր հատակագծի մշակման աշխատանքներ				
					այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
					- Նախագծահետազոտական ծախսեր	5134	250,000.0	250,000.0	250,000.0
					Միջոցառման անվանումը՝				
			70005		Շենքերի և շինությունների հեղափոխման աշխատանքներ		65,000.0	65,700.0	65,700.0
					Միջոցառման նկարագրությունը՝				
					Վթարային շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքների իրականացում				
					այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
					- Նախագծահետազոտական ծախսեր	5134	65,000.0	65,700.0	65,700.0
	06				Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)		220,113.0	225,371.2	229,427.2
					այդ թվում՝				
		01			Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)		220,113.0	225,371.2	229,427.2
					այդ թվում՝				
					Ծրագրի անվանումը՝				
			5005		Դատական գործեր		191,718.0	196,828.9	200,844.9
					Ծրագրի նպատակը՝				
					Ապահովել Երևան համայնքի շահերի դատական պաշտպանությունը				
					Վերջնական արդյունքի նկարագրություն՝				
					Իրավական անհրաժեշտ պահանջների ապահովում				
					Միջոցառման անվանումը՝				
			50005		Դատական ընթացակարգերի հետ կապված վճարումներ		191,718.0	196,828.9	200,844.9
					Միջոցառման նկարագրությունը՝				
					Դիմումներ, հայցադիմումներ, դատարանի որոշումների և վճիռների դեմ վերաքննիչ և վճարեկ բողոքներ ներկայացնելիս սահմանված վճարումներ				
					այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				

				- Պարտադիր վճարներ	4823	191,718.0	196,828.9	200,844.9
				<u>Ծրագրի անվանումը՝</u>				
		5023		Համայնքային գույքի կառավարում		28,395.0	28,542.3	28,582.3
				<u>Ծրագրի նպատակը՝</u>				
				Ապահովել համայնքային գույքի արդյունավետ կառավարումը և դրա պահպանությունը				
				<u>Վերջնական արդյունքի նկարագրություն՝</u>				
				Համայնքային գույքի կառավարման արդյունավետության բարձրացում				
				<u>Միջոցառման անվանումը՝</u>				
			50006	Գույքի նկատմամբ իրավունքների գրանցման, գնահատման և տեղեկատվության տրամադրման հետ կապված վճարումներ		28,395.0	28,542.3	28,582.3
				<u>Միջոցառման նկարագրությունը՝</u>				
				Համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի գրանցման, գնահատման և չափագրման ծառայությունների ձեռքբերում և համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի գրանցման համար պետական տուրքի վճարների տրամադրում				
				այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
				- Մասնագիտական ծառայություններ	4241	8,000.0	8,000.0	8,000.0
				- Պարտադիր վճարներ	4823	20,395.0	20,542.3	20,582.3
02				Պաշտպանություն		164,528.4	152,371.1	174,051.9
				այդ թվում՝				
	02			Քաղաքացիական պաշտպանություն		131,656.9	140,290.5	164,943.3
				այդ թվում՝				
		01		Քաղաքացիական պաշտպանություն		131,656.9	140,290.5	164,943.3
				այդ թվում՝				
				<u>Ծրագրի անվանումը՝</u>				
			5006	Քաղաքացիական պաշտպանության աջակցություն		131,656.9	140,290.5	164,943.3
				<u>Ծրագրի նպատակը՝</u>				
				Նվազեցնել տեխնածին և տարերային աղետների հնարավոր վտանգները				
				<u>Վերջնական արդյունքի նկարագրություն՝</u>				
				Արտակարգ իրավիճակների հնարավոր դեպքերի կանխում և հետևանքների նվազեցում				
				<u>Միջոցառման անվանումը՝</u>				
			50007	Բնակչության ազդարարման համակարգի սպասարկում		6,000.0	6,000.0	6,000.0
				<u>Միջոցառման նկարագրությունը՝</u>				
				Էլեկտրաշահանքների, դրանց կառավարման և հսկման համակարգերի վերանորոգում և ընթացիկ սպասարկում				
				այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
				- Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4252	6,000.0	6,000.0	6,000.0
				<u>Միջոցառման անվանումը՝</u>				
			50008	Բնակչության իրազեկման մակարդակի բարձրացում		-	-	6,000.0
				<u>Միջոցառման նկարագրությունը՝</u>				
				Արտակարգ իրավիճակներում վարվելակերպի կանոնների վերաբերյալ ուղեցույցների տրամադրում				
				այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
				- Տեղեկատվական ծառայություններ	4234			6,000.0

					<i>Միջոցառման անվանումը՝</i>				
				70006	Քաղաքացիական պաշտպանության իրականացման համար անհրաժեշտ պայմանների ապահովում		125,656.9	134,290.5	152,943.3
					<i>Միջոցառման նկարագրությունը՝</i>				
					Պաշտպանական կառույցների հիմնանորոգում, արտաքին հրշեջ հիդրանտների կառուցում և անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերում				
					այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
					- Շենքերի և շինությունների կառուցում	5112	50,000.0	50,000.0	50,000.0
					- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	53,156.9	61,790.5	53,443.3
					- Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	22,500.0	22,500.0	49,500.0
	05				Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)		32,871.5	12,080.6	9,108.6
					այդ թվում՝				
		01			Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)		32,871.5	12,080.6	9,108.6
					այդ թվում՝				
					<i>Ծրագրի անվանումը՝</i>				
			5007		Համայնքային աջակցություն զորահավաքային հարցերին		28,881.5	8,900.6	8,928.6
					<i>Ծրագրի նպատակը՝</i>				
					Աջակցել ուղրտի տարբեր հավաքների կազմակերպմանը				
					<i>Վերջնական արդյունքի նկարագրություն՝</i>				
					Հավաքների կազմակերպման արդյունավետության բարձրացում				
					<i>Միջոցառման անվանումը՝</i>				
				50009	Տրանսպորտային աջակցություն հավաքներին		8,881.5	8,900.6	8,928.6
					<i>Միջոցառման նկարագրությունը՝</i>				
					Զորակոչի, զորահավաքի և վարժական հավաքների կազմակերպմանն աջակցություն				
					այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
					- Գույքի և սարքավորումների վարձակալություն	4216	1,500.0	1,500.0	1,500.0
					- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	7,381.5	7400.6	7428.6
				70028	Համայնքում բնակվող զինապարտների հաշվառման էլեկտրոնային միասնական համակարգի ստեղծում		20,000.0	-	-
					<i>Միջոցառման նկարագրությունը՝</i>				
					Զինապարտների վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը համապատասխան զինվորական կոմիսարիատներին տրամադրելու գործընթացի իրականացում				
					այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
					- Ոչ նյութական հիմնական միջոցներ	5132	20,000.0		
					<i>Ծրագրի անվանումը՝</i>				
			5008		Այլընտրանքային աշխատանքային ծառայություն		3,990.0	3,180.0	180.0
					<i>Ծրագրի նպատակը՝</i>				
					Քաղաքացիական պարտքի կատարման այլընտրանքային տարբերակների ապահովում				
					<i>Վերջնական արդյունքի նկարագրություն՝</i>				
					Այլընտրանքային աշխատանքային ծառայության արդյունավետության ապահովում				
					<i>Միջոցառման անվանումը՝</i>				
				50010	Այլընտրանքային աշխատանքային ծառայողներին դրամական փոխհատուցման տրամադրում		3,990.0	3,180.0	180.0

					Միջոցառման նկարագրությունը՝				
					Այլընտրանքային աշխատանքային ծառայության անցած ՀՀ քաղաքացիներին «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված դրամական բավարարման և փոխհատուցումների տրամադրում				
					այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
					- Սուբսիդիաներ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	3,990.0	3,180.0	180.0
04					ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		60,795,781.5	63,749,530.4	57,264,534.9
					այդ թվում՝				
	01				Ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերություններ		8,830,221.1	5,900,746.0	2,700,796.6
					այդ թվում՝				
		01			Ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերություններ		8,830,221.1	5,900,746.0	2,700,796.6
					այդ թվում՝				
					Ծրագրի անվանումը՝				
		5009			Առևտրի կանոնակարգում		30,000.0	30,000.0	30,000.0
					Ծրագրի նպատակը՝				
					Կարգավորել ապօրինի առևտուրը				
					Վերջնական արդյունքի նկարագրություն՝				
					Ունենալ կանոնակարգված առևտրային հարաբերություններ				
					Միջոցառման անվանումը՝				
				50011	Իրավախախտ շրջիկ առևտրի կանխարգելում		15,000.0	15,000.0	15,000.0
					Միջոցառման նկարագրությունը՝				
					Իրավախախտ շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխման և պահպանման ծառայություն				
					այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
					- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	15,000.0	15,000.0	15,000.0
					Միջոցառման անվանումը՝				
				50012	Ինքնակամ տեղադրված առևտրի օբյեկտների գործունեության կանխարգելում		15,000.0	15,000.0	15,000.0
					Միջոցառման նկարագրությունը՝				
					Ինքնակամ տեղադրված առևտրի, ծառայությունների մատուցման օբյեկտների ապամոնտաժման, տեղափոխման և պահպանման ծառայություններ				
					այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
					- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	15,000.0	15,000.0	15,000.0
					Ծրագրի անվանումը՝				
		5010			Հանրային շենքերի էներգաարդյունավետության բարձրացում		8,800,221.1	5,870,746.0	2,670,796.6
					Ծրագրի նպատակը՝				
					Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ներուժի առավելագույն իրացում				
					Վերջնական արդյունքի նկարագրություն՝				
					Էներգախնայողության մակարդակի բարձրացում և վերականգնվող էներգետիկայի մասնաբաժնի աճ				
					Միջոցառման անվանումը՝				
				90001	Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի էներգաարդյունավետության» ծրագրի վարկի տրոհումների մարում		64,237.1	63,860.3	62,726.1

					Միջոցառման նկարագրությունը՝				
					Հանրային շենքերում էներգաարդյունավետության և էներգախնայողությանն ուղղված միջոցառումների իրականացման շրջանակներում վարկի տոկոսների մարում				
					այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
					- Արտաքին վարկերի գծով տոկոսավճարներ	4422	64,237.1	63,860.3	62,726.1
					Միջոցառման անվանումը՝				
				70007	Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի էներգաարդյունավետության» ծրագիր		420,263.2	-	-
					Միջոցառման նկարագրությունը՝				
					Ծրագրի շրջանակներում մանկապարտեզների շենքերում իրականացվող էներգաարդյունավետության և էներգախնայողության աշխատանքների իրականացում				
					այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
					- Շենքերի և շինությունների կառուցում	5112	420,263.2	-	-
					Միջոցառման անվանումը՝				
				51000	«Երևանի էներգաարդյունավետության» ծրագրի համաֆինանսավորում		84,052.6	-	-
					Միջոցառման նկարագրությունը՝				
					Ծրագրի շրջանակներում հանրային շենքերում իրականացվող էներգաարդյունավետության և էներգախնայողության աշխատանքների պետության կողմից համաֆինանսավորում				
					այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
					- Շենքերի և շինությունների կառուցում	5112	84,052.6	-	-
					Միջոցառման անվանումը՝				
				51001	Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միջավայրի գործընկերության փարածաշրջանային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Երևանի էներգաարդյունավետության ծրագրի երկրորդ փուլ (պափվիրակված լիազորություններ)		5,635,730.7	3,971,677.5	1,782,496.7
					Միջոցառման նկարագրությունը՝				
					Ծրագրի շրջանակներում հանրային շենքերում իրականացվող էներգաարդյունավետության և էներգախնայողության աշխատանքների իրականացում				
					այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
					- Այլ ծախսեր	4861	5,635,730.7	3971677.5	1782496.7
					Միջոցառման անվանումը՝				
				51002	Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միջավայրի գործընկերության փարածաշրջանային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Երևանի էներգաարդյունավետության ծրագրի երկրորդ փուլի դրամաշնորհային ծրագիր (պափվիրակված լիազորություններ)		2,237,756.7	1,576,983.1	707,785.9
					Միջոցառման նկարագրությունը՝				

					Ծրագրի շրջանակներում հանրային շենքերում իրականացվող էներգաարդյունավետության և էներգախնայողության աշխատանքների իրականացում				
					այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
					- Այլ ծախսեր	4861	2,237,756.7	1576983.1	707785.9
					<i>Միջոցառման անվանումը՝</i>				
				70029	Երևանի էներգաարդյունավետության ծրագրի երկրորդ փուլի համայնքային համաֆինանսավորում		358,180.8	258,225.1	117,787.9
					<i>Միջոցառման նկարագրությունը՝</i>				
					Ծրագրի շրջանակներում հանրային շենքերում իրականացվող էներգաարդյունավետության և էներգախնայողության աշխատանքների համայնքի կողմից համաֆինանսավորում				
					այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
					- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	358,180.8	258225.1	117787.9
	02				Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն		30,000.0	33,000.0	32,500.0
					այդ թվում՝				
		04			Ոռոգում		30,000.0	33,000.0	32,500.0
					այդ թվում՝				
					<i>Ծրագրի անվանումը՝</i>				
			5011		Ոռոգման համակարգի վերականգնում և արդիականացում		30,000.0	33,000.0	32,500.0
					<i>Ծրագրի նպատակը՝</i>				
					Ապահովել ոռոգման ցանցի հասանելիությունը				
					<i>Վերջնական արդյունքի նկարագրություն՝</i>				
					Ոռոգման ջրի հասանելիության բարելավում, կորուստների կրճատում				
					<i>Միջոցառման անվանումը՝</i>				
			80001		Ոռոգման ցանցի կառուցում և հիմնանորոգում		30,000.0	33,000.0	32,500.0
					<i>Միջոցառման նկարագրությունը՝</i>				
					Ոռոգման ցանցի կառուցման, վերականգնման, հիմնանորոգման աշխատանքներ				
					այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
					- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	30,000.0	33,000.0	32,500.0
	05				Տրանսպորտ		56,858,751.8	62,505,725.8	58,819,296.7
					այդ թվում՝				
		01			Ճանապարհային տրանսպորտ		44,354,115.8	40,097,139.8	38,410,195.7
					այդ թվում՝				
					<i>Ծրագրի անվանումը՝</i>				
			5012		Ճանապարհային ենթակառուցվածքների արդիականացում և բարելավում		16,440,276.1	12,516,281.4	14,501,845.5
					<i>Ծրագրի նպատակը՝</i>				
					Բարելավել գործող ճանապարհային ցանցի ֆիզիկական վիճակը և կառուցել նոր ճանապարհային ենթակառուցվածքներ				
					<i>Վերջնական արդյունքի նկարագրություն՝</i>				
					Նոր և պատշաճ վիճակում գտնվող ճանապարհային ենթակառուցվածքներ				
					<i>Միջոցառման անվանումը՝</i>				
			50013		Ասֆալտ-բեթոնյա ծածկի պահպանում		3,027,110.0	3,055,392.0	3,629,953.8
					<i>Միջոցառման նկարագրությունը՝</i>				
					Ճանապարհների ճաքալցման և փոսալցման աշխատանքներ				

					այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
					- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	3,027,110.0	3,055,392.0	3,629,953.8
					<i>Միջոցառման անվանումը՝</i>				
				50014	Կամրջային կառուցվածքների պահպանում և նորոգում		90,000.0	90,000.0	90,000.0
					<i>Միջոցառման նկարագրությունը՝</i>				
					Կամուրջների, ուղեանցների, վերգետնյա անցումների պահպանում և ընթացիկ նորոգման աշխատանքների իրականացում				
					այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
					- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	90,000.0	90,000.0	90,000.0
					<i>Միջոցառման անվանումը՝</i>				
				80002	Ճանապարհների միջին նորոգում		2,500,000.0	2,600,000.0	2,800,000.0
					<i>Միջոցառման նկարագրությունը՝</i>				
					Ճանապարհների պատվածքի մաշված վերին շերտի վերականգնման աշխատանքներ				
					այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
					- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	2,500,000.0	2,600,000.0	2,800,000.0
					<i>Միջոցառման անվանումը՝</i>				
				80003	Քաղաքային ճանապարհների կառուցում և վերակառուցում		2,700,000.0	3,000,000.0	3,300,000.0
					<i>Միջոցառման նկարագրությունը՝</i>				
					Քաղաքային ճանապարհների կառուցման և հիմնանորոգման աշխատանքներ				
					այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
					- Շենքերի և շինությունների կառուցում	5112	2,700,000.0	3,000,000.0	3,300,000.0
					- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	-	-	-
					<i>Միջոցառման անվանումը՝</i>				
				80005	Կամուրջների և էստակադանների կառուցում և հիմնանորոգում		550,000.0	-	-
					<i>Միջոցառման նկարագրությունը՝</i>				
					Կամուրջների և էստակադանների կառուցման և հիմնանորոգման աշխատանքներ				
					այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
					- Շենքերի և շինությունների կառուցում	5112			
					- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	550,000.0		
					<i>Միջոցառման անվանումը՝</i>				
				51003	Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային զարգացման ներդրումային ծրագիր(պարզվիրակված լիազորություններ)		6,368,712.5	3,630,136.5	4,621,943.4
					<i>Միջոցառման նկարագրությունը՝</i>				
					Քաղաքային զարգացման ներդրումային ծրագրի շրջանակներում ճանապարհային շինարարություն				
					այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
					- Այլ ծախսեր	4861	6,368,712.5	3,630,136.5	4,621,943.4
					<i>Միջոցառման անվանումը՝</i>				

				51004	Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային զարգացման ներդրումային ծրագրի համակարգում և կառավարում (պարզիկական լիազորություններ)		704,453.6	140,752.9	59,948.3
					Միջոցառման նկարագրությունը՝				
					Քաղաքային զարգացման ներդրումային ծրագրի շրջանակներում համակարգում և կառավարում				
					այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
					- Այլ ծախսեր	4861	704,453.6	140,752.9	59,948.3
					Միջոցառման անվանումը՝				
				50080	Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային զարգացման ներդրումային ծրագրի իրացման միջոցառումներ		500,000.0	-	-
					Միջոցառման նկարագրությունը՝				
					Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի շրջանակներում համայնքային հողերի օտարման գործընթացի ապահովում				
					այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
					- Այլ նպաստներ բյուջեից	4729	500,000.0	-	-
					Ծրագրի անվանումը՝				
			5013		Ճանապարհային երթևեկության կազմակերպում		1,688,884.9	1,686,484.9	1,497,594.9
					Ծրագրի նպատակը՝				
					Ապահովել ճանապարհների երթևեկության անվտանգությունը և հարմարավետությունը				
					Վերջնական արդյունքի նկարագրություն՝				
					Ճանապարհային անվտանգության բարձրացում				
					Միջոցառման անվանումը՝				
				50015	Երթևեկության համար անհրաժեշտ համակարգերի գործունեության ապահովում		6,312.3	6,812.3	6,812.3
					Միջոցառման նկարագրությունը՝				
					Լուսացուցային համակարգերի սպասարկում և երթևեկությունը օժանդակող ծառայությունների ապահովում				
					այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
					- Էներգետիկ ծառայություններ	4212	868.3	868.3	868.3
					- Կապի ծառայություններ	4214	444.0	444.0	444.0
					- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	5,000.0	5,500.0	5,500.0
					Միջոցառման անվանումը՝				
				50016	Ավտոկայանատեղի կազմակերպման ծառայություն		422,034.0	422,034.0	422,034.0
					Միջոցառման նկարագրությունը՝				
					Ավտոկայանատեղիների պահպանում				
					այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
					- Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	62,034.0	62,034.0	62,034.0
					- Այլ ծախսեր	4861	360,000.0	360,000.0	360,000.0
					Միջոցառման անվանումը՝				
				50017	Հենապարերի կամ այլ կանխարգելիչ շինությունների վերանորոգում և պահպանում		62,000.0	63,600.0	63,310.0
					Միջոցառման նկարագրությունը՝				

					Հենապատերի կամ այլ կանխարգելիչ շինությունների վերանորոգման և պահպանման աշխատանքներ				
					այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
					- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	62,000.0	63,600.0	63,310.0
					<i>Միջոցառման անվանումը՝</i>				
				51005	Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհափորանսպորտային պատահարների կանխարգելում (պարպիրակված լիազորություններ)		765,928.6	765,928.6	765,928.6
					<i>Միջոցառման նկարագրությունը՝</i>				
					Ճանապարհային երթևեկության կարգավորման ճանապարհային գծանշումների, երթևեկության նշանների տեղադրման, լուսացույցերի տեղադրման և սպասարկման իրականացում				
					այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
					- Էներգետիկ ծառայություններ	4212	48,000.0	48,000.0	48,000.0
					- Այլ ծախսեր	4861	717,928.6	717,928.6	717,928.6
					<i>Միջոցառման անվանումը՝</i>				
				80006	Փողոցների նյութատեխնիկական հագեցվածություն		287,800.0	287,800.0	114,500.0
					<i>Միջոցառման նկարագրությունը՝</i>				
					Փողոցներում համապատասխան ճանապարհային ուղենիշների, շենքերի, փողոցների անվանամբ ցուցանակների տեղադրում				
					այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
					- Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	287,800.0	287,800.0	114500
					<i>Միջոցառման անվանումը՝</i>				
				80007	Քարաթափումների և սողանքների կանխարգելման նպատակով շինությունների կառուցում և հիմնանորոգում		122,500.0	118,000.0	102,700.0
					<i>Միջոցառման նկարագրությունը՝</i>				
					Հենապատերի և այլ կանխարգելիչ շինությունների կառուցման և հիմնանորոգման աշխատանքներ				
					այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
					- Շենքերի և շինությունների կառուցում	5112	23,000.0	22,500.0	22,200.0
					- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	99,500.0	95,500.0	80,500.0
					<i>Միջոցառման անվանումը՝</i>				
				80008	Երթևեկության կարգավորման և անվտանգության ապահովման լուսացույցային համակարգերի ներդրում		22,310.0	22,310.0	22,310.0
					<i>Միջոցառման նկարագրությունը՝</i>				
					Հետիոտնային կանչի ռեժիմով աշխատող լուսացույցային համակարգերի ձեռք բերում և տեղադրում				
					այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ				
